



Սիրելի գյուճերեցիներ,

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Գյուճերու օրվա կապակցությամբ: Այս օրը մեր ամենանվիրական ու սիրելի տոներից մեկն է: Այն միավորում է բոլոր գյուճերեցիներին, ում համար թանկ է հարազատ քաղաքը, ով հպարտանում է նրա անցյալով, հարուստ ժառանգությամբ և անսպառ նվիրումով ու սիրով կերտում է նրա նորօրյա տարեգրությունը:

Հարգելի համաքաղաքացիներ, յուրաքանչյուր տոն պատեհ առիթ է արժևորելու մեր անցած ուղին: Հետադարձ հայացք գցելով դեպի անցյալը՝ մենք վստահաբար կարող ենք փաստել, որ իր հերթական տոնը Գյուճերին դիմավորում է շոշափելի նվաճումներով:

Աղետ տեսած մեր հնամենի քաղաքը օրեցօր հաստատուն քայլերով վերականգնվում է մեր համատեղ ջանքերի շնորհիվ: Ես հպարտ եմ, որ ծառայում եմ Գյուճերին, և վստահեցնում եմ անել հնարավորն ու կարելին մեր հաջողությունները կրկնապատկելու և հարազատ քաղաքը ժամանակակից ու բարեկեցիկ քաղաք դարձնելու համար:

Սիրելի գյուճերեցիներ, վերստին շնորհավորում եմ ձեզ քաղաքի օրվա կապակցությամբ և մաղթում խաղաղ երկինք, քաջառողջություն, իղձերի իրականացում և ընտանեկան երջանկություն:

Շնորհավոր տոնդ, սիրելի Գյուճերի:

Գյուճերու քաղաքապետ՝ Սամվել Բալասանյան